



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

16 հոկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացիներ Մազդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի եւ Ռուդոլֆ
Հովակիմյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ
Մազդա Եղիազարյանը, Արամ Սարգսյանը եւ Ռուդոլֆ Հովակիմյանը 2014թ. սեպտեմբերի
26-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել
ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6 եւ 91, 18-րդ հոդվածներին, 101-րդ հոդվածի 7-րդ
ենթակետին հակասող եւ անվավեր,

եւ/ կամ

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը,
այնքանով, որքանով չի նախատեսում սահմանադրական դատարան դիմելու մասին
դատավարության կողմի միջնորդությունը մերժելու որոշումը պատճառաբանելու դրույթ,
ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3 եւ 83.5, 5, 6 եւ 91, 18-րդ հոդվածներին եւ 101-րդ

հողվածի 7-րդ ենթակետին հակասող եւ անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում օրենքի որակի չափանիշներին եւ իր մեջ պարունակելով օրենսդրական բաց՝ անհաղթահարելի իրավական եւ բացասական հետեւանքներ են ստեղծել իրենց նկատմամբ:

2. Դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոնշյալ դրույթը դիմողների նկատմամբ չի կիրառվել:

Այսպես, դիմումին կից ներկայացված (էլեկտրոնային) փաստաթղթերի, մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանը, դիմողների կողմից ներկայացրած բողոքները թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ «... վճռաբեկ բողոքը չի բերվել փաստաբանի միջոցով, ինչպես նաեւ վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել իր ներկայացուցչի՝ սահմանված կարգով ձեւակերպված լիազորագիրը ...», առանց որեւէ անդրադարձ կատարելու «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած դիրքորոշման, ըստ որի՝ Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին որպես պարտադիր պայման համարվող պահանջներն ինքնանպատակ չեն: Դրանք կոչված են ապահովելու սահմանադրական արդարադատություն իրականացնելու սահմանադրական դատարանի պատշաճ եւ արդյունավետ գործառույթի իրականացումը՝ դատարանին ձեռքազատելով ինչպես անհիմն դիմումներից եւ դրանց հետեւանքով դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ որպես սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ կարող է համարվել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ով դատարաններում հանդիսացել է դատավարության մասնակից /կողմ/, առկա է դատարան/ներ/ի կողմից իր նկատմամբ կիրառված դատական ակտ եւ վերջինիս կողմից սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է

ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

- **որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,**

- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,

- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով տվյալ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացիներ Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի եւ Ռուդոլֆ Հովակիմյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝